

World Theatre Day, 27 March 2016

Journée Mondiale du Théâtre, 27 mars 2016



Message: Anatoli Vassiliev, Russia

Message

Անատոլի Վասիլևի ուղերձը թատրոնի միջազգային օրվան

Մենք ունենք թատրոնի կարիքը:

Սա է այն հարցը, որ հազարավոր թատրոնից հիասթափված պրոֆեսիոնալներ

եւ միլիոնավոր մարդիկ տալիս են իրենց:

Ինչու է այն մեզ պետք:

Այս տարիների ընթացքում, երբ բեմն այնքան աննշան է՝ համեմատած քաղաքային հրապարակների եւ պետական կառույցների հետ, որտեղ բեմադրվում են կյանքի իրական ողբերգությունները:

Ի՞նչ է այն մեզ համար:

Ոսկեզօծ պատկերասրահներ եւ օթյակներ թատրոնի դահլիճում, թավշե բազկաթոռներ, կեղտոտ բեմական թելեր, լավ մշակված դերասանական ձայներ,

խառնաշփոթ: Մի բան, որն ամբողջովին տարբեր է. սեւ արկղեր՝ լցված կեղտով

ու արյունով՝ մի խումբ կատաղած, մերկ մարմիններ ներսում:

Ի՞նչ է նա ի վիճակի մեզ ասելու:

Ամեն ինչ:

Թատրոնը մեզ կարող է ասել ամեն ինչ: Ինչպես է Աստված թագավորում երկնքում, ինչպես են բանտարկյալները տանջվում մոռացված ստորգետնյա

բանտերում, ինչպես կարող է կիրքը բարձրացնել մեզ, եւ ինչպես սերը կարող է

կործանել, ինչպես ամեն ոք հարազատ մարդու կարիք ունի այս աշխարհում,

ինչպես է թագավորում կեղծիքը, եւ ինչպես են մարդիկ ապրում բնակարաններում, մինչդեռ երեխաները տանջվում, ոչնչանում են համակենտրոնացման ճամբարներում, եւ թե ինչպես են նրանք բոլորը ստիպված անապատ վերադառնալու, ինչպես մենք օր օրի ստիպված ենք

միանալ մեր սիրելիներին: Թատրոնը մեզ կարող է ասել ամեն ինչ:

Թատրոնը եղել է եւ կլինի միշտ...

Եւ հիմա, այս հիսուն կամ յոթանասուն տարիների ընթացքում այն հատկապես

անհրաժեշտ է: Որովհետեւ, եթե հայացք գցենք հասարակական արվեստին

If you need a Word file instead of a PDF file of the message, please write to info@iti-worldwide.org.

Copyright © 2016 by Anatoli Vassiliev and ITI, France

World Theatre Day, 27 March 2016

Journée Mondiale du Théâtre, 27 mars 2016



Message: Anatoli Vassiliev, Russia

միանգամից կտեսնենք, որ միայն թատրոնն է տալիս մեզ բառ՝
բերանից բերան,
հայացք՝ աչքից աչք, ժեստ՝ ձեռքից ձեռք եւ մարմնից մարմնին: Այն
միջնորդի
կարիք չունի՝ աշխատելու համար մարդկային էակների շրջանում, այն
կազմում
է լույսի ամենաթափանցիկ կողմը, այն չի պատկանում ո՛չ հյուսիսին, ո՛չ
հարավին, ո՛չ արեւելքին, ո՛չ արեւմուտքին... Ո՛չ, այն լույսի էությունն է,
որը
շողում է աշխարհի չորս կողմից, այն միանգամից ճանաչելի է բոլորին՝
թշնամիներին եւ ընկերներին:

Մենք ունենք թատրոնի կարիքը, որը միշտ տարբեր է, մենք ունենք
թատրոնի
տարբեր տեսակների կարիքը:
Ես կարծում եմ, որ թատրոնի բոլոր հնարավոր տեսակներից միայն
հնացած
տեսակն է, որն ապացուցում է իր մշտապես պահանջված լինելը:
Ծիսական
թատրոնը չպետք է արհեստականորեն հակադրված լինի
"քաղաքակիրթ"
ազգերին: Աշխարհիկ մշակույթը հիմա ավելի ու ավելի է քայքայվում,
այսպես
կոչված "մշակութային ինֆորմացիան" հետզհետե դուրս է մղում
պարզությանը,
այդ թվում նաեւ մեր հույսը, որ մի օր կտեսնենք նրանց:
Կորչե՛ն ժամանակակից սարքերն ու համակարգիչները, ուղղակի
գնացե՛ք
թատրոն, զբաղեցրե՛ք դահլիճի բոլոր կարգերը, լսե՛ք բառերը եւ նայե՛ք
կենդանի
պատկերներին: Ահա, սա թատրոնն է ձեր դիմաց, մի՛ անտեսեք այն, մի՛
կորցրեք
մասնակցելու ձեր հնարավորությունը, միգուցե, մեր ամենաթանկ
հնարավորությունը կորցնում ենք իզուր:
Մենք ունենք թատրոնի բոլոր տեսակների կարիքը:
Կա թատրոնի միայն մի տեսակ, որի կարիքը, համոզված եմ, ոչ ոք չունի՝
քաղաքական խաղերի թատրոնը, քաղաքական թակարդների թատրոն,
քաղաքական գործիչների անօգուտ թատրոն: Մենք չունենք
ահաբեկչական
թատրոնի կարիքը թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ, այն ինչի կարիքը
չունենք՝

If you need a Word file instead of a PDF file of the message, please write to info@iti-worldwide.org.

World Theatre Day, 27 March 2016

Journée Mondiale du Théâtre, 27 mars 2016



Message: **Anatoli Vassiliev, Russia**

մասնաշենքներն են, արյունոտ փողոցներն ու հրապարակները
մայրաքաղաքում եւ մարզերում, բախումների կեղծ թատրոնը,
կրոնական եւ
էթնիկ խտրականությամբ պայմանավորված կեղծ թատրոնը:
Նյութը անգլերենից թարգմանեց Անի Սարգսյանը

Translation into Armenian by: Ani Sargsyan

If you need a Word file instead of a PDF file of the message, please write to info@iti-worldwide.org.

Copyright © 2016 by Anatoli Vassiliev and ITI, France